

Իմ խոսքն են է, որ էլի մենք իրար ցավ կիմանանք: Սրտից սիրտ մի բարակ կամուրջ է, էն է մարդուն մարդ դարձնողը: Էն էլ որ չլինի, գետը թող բջի տանի մարդուն: Էն որ կռունկը թուխալի մեջ ցրիվ է գալիս, լսե՞լ եք ոնց են իրար կանչում, ու մինն էլ չի կորչում: Ուրեմն մենք են երկնային թռչունի չափ էլ չկա՞նք... Իրար ձեռք բռնեցեք, մինչեւ դուրս գանք եւ դժվար տարին:

Ակսել Բակունց

Հիմնադիր ԵՎ Հրատարակիչ «ԱՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԿՈՄՍՏԱՆԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
իրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468
2008
9 771829 346006

Ուզո՞ւմ ես բարձրանալ քո դարից. - ուրեմն ոգով դու պիտի Թե՛ անցյալը զգաս հարազատ - եւ թե՛ նոր լինես ներկայո՞ւմ: - ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՇԱԲԱԹ, 25 ԱՊՐԻԼԻ 2020Թ.
№ 8 (524)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը՝ արտակարգ դրության պայմաններում

Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելուց հետո ի՞նչ ռիթմով է աշխատում, ի՞նչ նոր գործառույթներ ունի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը: Այս հարցերի պատասխանն իմանալու նպատակով եղանք Սյունիքի փրկարարական վարչությունում:

- Մեր գերնպատակն է՝ անձնակազմը մարտական լինի, այս նեղ վիճակում կտապավենք, եթե մեզից մեկը հիվանդանա, եթե մեր մեջ վարակված մեկը լինի, բոլորս պիտի մեկուսացվենք. - գրույցի սկզբում ասաց ԱԻՆ Սյունիքի փրկարարական վարչության տնօրեն, փրկարարական ծառայության գնդապետ Արթուր Հարությունյանը:

Ի դեպ, նա երկարամյա ծառայությունից հետո թոշակի էր անցել, բայց հետ է կանչվել (26 տարի աշխատել է համակարգում, մոտ 15 տարի՝ վարչության տնօրեն):

Ա. Հարությունյանի փոխանցմամբ՝ մասնաձյուղ տարեց աշխատակիցներ չունի (այսպես ասած՝ կրիտիկական տարիքի), իրենք լիարժեք աշխատում են, օրվա հերթափոխի աշխատակիցների ջերմությունը հերթապահության ընթացքում երեք անգամ ստուգվում է: Այս համատեքստում նշում է, որ Սիսիանի աշխատակիցներից մեկը զանգել է տեղեկացրել է, որ 37.2 աստիճան ջերմություն ունի: Հորդորել ենք անհապաղ դիմել բժշկի:

Կորոնավիրուսի տարածման հետ կապված՝ տեղեկանում ենք, որ մասնաձյուղի աշխատակիցներն ախտահանումներ են կատարում մարզկենտրոնի խոշոր առետորի կենտրոններում, շուկայում, այնտեղ, որտեղ գնումներ անելու համար լինում են մարդիկ: Այս գործընթացն իրենց գործառույթների մեջ չի մտնում, դա անում են քաղաքին օգտակար լինելու մղումով: Յուրաքանչյուր կանչին մասնաձյուղի աշխատակիցները ներկայանում են անհատական պաշտպանիչ միջոցներով՝ պահպանելով սանիտարական հիգիենայի կանոնները: Նաեւ մասնաձյուղի 20 հրշեջ-փրկարար՝ ոստիկանության աշխատակիցների հետ, հերթապահություն են անում, նրանք հիմնականում բացատրական աշխատանք են տանում բնակչության շրջանում:

Լինելով մասնաձյուղում՝ նաեւ հետաքրքրվեցինք այս տարվա առաջին եռամսյակում տեղի ունեցած արտակարգ դեպքերի վիճակագրությամբ: Հրուցակիցս փոխանցեց, որ մարդածին պատահարների թիվն էականորեն նվազել է: Բնական է՝ մարդ-

Արցախյան հիմնախնդիր. Ռուսաստանը բացում է փակագծերը՝ բանակցային սեղանին կարգավորման փուլային փարբերակն է, որը հայկական կողմը մերժել է դեռեւս 1990-ականների վերջին

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը Գորչակովի հիմնադրամի կազմակերպած կլոր սեղանի շրջանակում հայտարարել է, որ բանակցությունների սեղանին դարաբաղյան հակամարտության փուլային կարգավորում ենթադրող փաստաթուղթ է դրված: Նա հավելել է, որ 2019-ի ապրիլին Մոսկվայում ՀՀ, Ադրբեջանի եւ ՌԴ ԱԳ նախարարների եւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների մասնակցությամբ հանդիպմանը նոր նախագծեր էին ներկայացվել, որոնք այժմ ակտիվ քննարկվում են:

2019-ի ապրիլի 15-ին Մոսկվայում ՀՀ ու ԱՀ ԱԳ նախարարների հանդիպումն է տեղի ունեցել: Դրա արդյունքներով ընդունվել էր հայտարարություն, որում ընդգծվել էր շահագրգռվածությունը

նր հակամարտության գոտում իրադրության հետագա կայունացման ուղղությամբ, մասնավորապես գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանում, ինչպես նաեւ լրագրողների փոխայցելության ու ԼՂ-ում ու Ադրբեջանում կայանավորվածների հարազատների այցելությունների մասին:

«Այդ փաստաթղթերը ենթադրում են փուլային մոտեցում, ինչը ենթադրում է առաջին փուլում առավել ակտուալ խնդիրների լուծում, ԼՂ մերձակա մի քանի շրջանի ազատում եւ տրանսպորտային, տնտեսական եւ այլ կոմունիկացիաների ապաշրջափակում: Վստահ եմ, որ երբ հասնենք այդ փաստաթղթերի ստորագրմանը, դա կարեւորագույն քայլ կլինի ՄԱԿ ԱԽ բանաձեւերի կատարման ուղղությամբ, որով պահանջվում էր դադարեցնել պատերազմն ու բանակցու-

թյուններ սկսել: Հիմա պետք է պայմանավորվել եւ հենց դրան ենք ուզում հասնել որպես ԵԱՀԿ ՄԽ համանախագահներ», - ասել է Լավրովը:

Անդրադառնալով ՄԱԿ ԱԽ դարաբաղյան հակամարտության վերաբերյալ ընդունված բանաձեւերին՝ Լավրովն ասել է, որ դրանք հայտնի փաստաթղթեր են, որոնք ընդունվել են մարտական գործողությունների ամենաթեժ պահին եւ առաջին հերթին ենթադրում էին ռազմական գործողությունների դադարեցում եւ անցում բանակցությունների:

«Այդ փաստաթղթերում, այո, ասվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին: Սակայն այդ փաստաթղթերում նաեւ կոչ կար պատերազմը դադարեցնելու եւ բանակցություններին անցնելու մասին», - ասել է Լավրովը:

www.panarmenian.net

Սյունիքի մարզում կորոնավիրուսով հիվանդ պացիենտների կրկնակի թեստը եղել է բացասական. բոլոր վարակակիրներն առողջացել են:

Արայիկ Յարությունյանը հրապարակել է այն սկզբունքները, որի շուրջ Արցախը պատրաստ է շարունակելու բանակցություններն Ադրբեջանի հետ

Արցախի Յանրապետության նորընտիր նախագահ Արայիկ Յարությունյանը շատ կոշտ է արձագանքել ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ ապրիլի 21-ին տարածած հայտարարությանը: Այս առթիվ նա ֆեյսբուքյան իր էջում կատարել է հետևյալ գրառումը.

«Յարգելի հայրենակիցներ, հորապետ հասկանալով մեր հասարակության անհանգստությունները՝ պայմանավորված ադրբեջանա-արցախյան հիմնախնդրի շուրջ ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրի հետևանքների ու Յայաստանի ու Ադրբեջանի իշխանությունների մասնակցությամբ պարբերաբար տեղի ունեցող ընթացակարգներով՝ մեկ անգամ ես ցանկանում եմ վերահաստատել այդ հարցում մեր սկզբունքային դիրքորոշումը, որ առանց պաշտոնական Ստեփանակերտի լիարժեք ու լիիրավ ընդգրկվածության, որեւէ արդյունավետ հանգրվանի հնարավոր չէ հասնել: Մենք շահագրգռված ենք հիմնախնդրի խաղաղ ու վերջնական կարգավորմամբ եւ



գերազանցապես գիտակցում ենք, որ այն իր վճռական ազդեցությունն է ունենալու տարածաշրջանում կայուն եւ երկարատեւ խաղաղություն հաստատելու վրա, սակայն ակնկալում ենք նույն գիտակցումն ու պատասխանատվությունը նաեւ Ադրբեջանի կողմից: Իհարկե, մենք բարձր ենք գնահատում Յայաստանի Յանրապետության իշխանությունների բացառիկ դերակատարումն այս հարցում, բայց պետք է ընդունել, որ բանակցային սեղանին ներկայացված ցանկացած առաջարկի կամ

փաստաթղթի շուրջ Արցախի ժողովրդի անունից բանակցելու համար առաջնային մանդատը ստացել են Արցախի Յանրապետության իշխանությունները:

Կարեւորելով ԵԱՀԿ Մինսկի խմբի գործադրած ջանքերը հակամարտության խաղաղ կարգավորման գործում եւ ուշադիր հետեւելով ապրիլի 20-ին եւ 21-ին համանախագահների եւ արտգործնախարարների հետ առանձին, ապա՝ բոլոր կողմերի մասնակցությամբ տեղի ունեցած տեսակոնֆերանսներին՝ ցավովք, հերթական անգամ արձանագրում ենք, որ Ադրբեջանի իշխանությունները շարունակում են խուսափել հակամարտության իրական կողմի հետ ուղիղ բանակցությունների վարումից: Դա, առաջնագծում պարբերաբար կրկնվող սադրանքների եւ հայատյաց քաղաքականության հետ համատեղ, մեծապես նվազեցնում է պաշտոնական Բաքվի ցուցադրած ձգտումների ազնվության ու վստահելիության մակարդակը:

Որպես Արցախի Յանրապետության ընտրված նախագահ՝ ես հայտարարում եմ՝

1. Արցախի Յանրապետության իշխանությունները պետք է լիիրավ ու լիարժեք հիմունքներով մասնակցեն հակամարտության խաղաղ եւ վերջնական կարգավորմանն ուղղված գործընթացի բոլոր փուլերին.
2. Արցախի ժողովրդի անվտանգությունը որեւէ պարագայում չի կարող վտանգի տակ դրվել կամ սակարկության ենթարկվել.
3. Առանց Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի առաջնահերթ ճանաչման հակամարտության կարգավորմանն որեւէ տարբերակ չի կարող կողմերի միջեւ բովանդակային քննարկման առարկա դառնալ.
4. Պետք է հստակ երաշխիքներով բացառվեն հակամարտության կարգավորման գործընթացում ուժի ու դրա սպառնալիքի կիրառման փորձերը, քանի որ հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներն արժանի են խաղաղության մեջ ապրելու. այլապես Արցախի Յանրապետությունը պատրաստ է անհամաչափ հակահարված տալու նախահարձակ Ադրբեջանին՝ ռազմական գործողությունները նաեւ տեղափոխելով նրա տարածք.
5. Հակամարտության կարգավորման ցանկացած տարբերակում բացառվում են Արցախի իշխանությունների կողմից միակողմանի զիջումներ կամ անհամաչափ ու անհամարժեք փոխզիջումներ.
6. Հակամարտության կարգա-

վորման եւ դրա հարակից գործընթացներում հայ փախստականներն ու ներքին տեղահանված անձինք պետք է իրավահավասար ներգրավվածություն ունենան ադրբեջանցի փախստականների ու ներքին տեղահանված անձանց հետ միասին, իսկ նրանց հիմնախնդրները՝ միանման ու միաժամանակյա լուծումներ ստանան.

7. Միջազգային հանրությունը (առաջնահերթորեն՝ ԵԱՀԿ-ն եւ համաձայնագրի երկրները) պետք է բացառեն Արցախի բնակիչների իրավունքների՝ հակամարտությամբ ու ԱՀ միջազգային կարգավիճակով պայմանավորված խախտումներն ու սահմանափակումները, ներառյալ՝ մարդու իրավունքներին առնչվող ու մարդասիրական միջազգային ծրագրերից փաստացի մեկուսացումը, որոնք Ադրբեջանը փորձում է կիրառել առնվազն որպես ճնշման միջոց՝ ի հեծուկս միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքների:

Արցախի իշխանություններն ինչպես նախկինում, այնպես էլ ապագայում պատրաստակամ են գործադրելու առավելագույն ջանքեր փոխարքած հարգանքի մթնոլորտում կողմերի միջեւ վստահության ամրապնդման եւ հակամարտության խաղաղ ու վերջնական կարգավորման հարցում անհրաժեշտ կամք դրսեւորելու եւ առաջընթաց արձանագրելու համար:

«Ազատ հայրենիք» կուսակցության մամուլի կենտրոն

Ռուսաստանի առողջապահության նախկին նախարարը՝ Զանգեզուրի պղնձամուլիբդենայինի բաժնետեր

Հայաստանի արդյունաբերական ամենախոշոր ընկերությունում՝ Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատում բաժնետերերի նոր փոփոխություններ են կատարվել: ՍիվիլՆեթը պարզել է, որ Հայաստանի արդյունաբերական հսկայի բաժնետոմսերի 12,5 տոկոսն անցել է Ռուսաստանի առողջապահության եւ սոցիալական զարգացման նախկին նախարար, Ուկրաինայում ՌԴ նախկին դեսպան Սիլվիոյի Զուրաբովին:



փաստաթղթերից պարզ է դառնում, որ փետրվարի 3-ին ժան Ժակ Բաֆեն ընկերության՝ Walnut Finance Limited-ի բաժնետոմսերն օտարել է ռուս քաղաքական գործիչ Սիլվիոյի Զուրաբովին, որը ներկայում տնօրինում է կոմբինատի 12,5 տոկոս բաժնեմասը: Գործարքի ընթացքում Զուրաբովը հանդես է եկել որպես բիզնեսմեն: Ո՛վ է Սիլվիոյի Զուրաբովը: Նա Ռուսաստանի քաղաքական համակարգի հայտնի դեմքերից է: 1998-1999 թվականներին եղել է ՌԴ նախկին նախագահ Բորիս Ելցինի խորհրդակցանք՝ սոցիալական հարցերի գծով, ապա նշանակվել է կենսաթոշակային հիմնադրամի ղեկավար: Հայտնի է սոցիալական ոլորտում բարեփոխումների իր փորձերով: 2004-ից Զուրաբովը դարձել է Ռուսաստանի առողջապահության եւ սոցիալական զարգացման նախարար, ապա եղել է նախագահ Դմիտրի Մեդվեդևի խորհրդակցանք, իսկ հետագայում վերջինիս հրամանագրով նշանակվել Ուկրաինայում ՌԴ դեսպան՝ այդ

պաշտոնում մնալով մինչ 2016-ը: Ուկրաինայում ՌԴ դեսպանի պարտականությունները կատարելու ընթացքում էր, որ տեղի ունեցավ Մայրաքաղաքը...

Սիլվիոյի Զուրաբովի եղբայրը՝ Ալեքսանդր Զուրաբովը, եղել է «Աերոֆլոտի» գլխավոր տնօրենը, խոշոր մի շարք այլ ընկերությունների բաժնետեր է:

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակում Հայաստանն այս տարի առաջին անգամ հրապարակելու է մետաղական հանքարդյունաբերողների իրական սեփականատերերի ռեեստրը: Ընկերությունները մինչև փետրվարի 20-ը պետք է իրենց իրական սեփականատերերի մասին հայտարարագիր ներկայացնեն արդարադատության նախարարություն: ԶՊՄԿ-ում բաժնետերերի այս փոփոխությունը պետք է ներառված լինի նշված հայտարարագրում: ՍիվիլՆեթի տրամադրության տակ հայտնված տվյալների համաձայն՝ բաժնետիրական վերջին փոփոխությունները կոմբինատը չի արձանագրել իր հայտարարագրում: Կոմբինատի կայքում ներկայացված բաժնետերերի շրջայում վերջին նորությունները ես բացակայում են:

Ներկայում Զանգեզուրի պղնձամուլիբդենայինի բաժնետոմսերի 75 տոկոսը պատկանում է գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խմբին, 12,5 տոկոսը՝ «Սուն մեթալս» ընկերությանը, որի բաժնետերը Walnut Finance Limited-ն է, որի բաժնետերն իր հերթին Սիլվիոյի Զուրաբովն է: Ըստ ԶՊՄԿ կայքի՝ մյուս 12,5 տոկոսը պատկանում է «ԱՄՓ հոլդինգ»-ին, որի բաժնետերերն են կոմբինատի տնօրեն Միեր Պոլսկովը, նրա տեղակալ Նարեկ Ամբրոսյանն ու Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի եղբայրը՝ Կարեն Հակոբյանը:

Մկրտիչ Կարապետյան
<https://www.civilnet.am/>
25 մարտ 2020



120 միլիոն դրամ կհատկացվի Կապան համայնքին

Կապան համայնքի ղեկավար Գետրո Գարսյանը եւ «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը ստորագրեցին սոցիալ-տնտեսական համագործակցության մասին հուշագիր: Հուշագրի համաձայն՝ ընկերությունը սոցիալ-տնտեսական համագործակցության շրջանակներում 120 միլիոն դրամով ֆինանսավորելու է համաձայնագրով սահմանված աշխատանքների իրականացման եւ գույքի ձեռքբերման համար:

Թաղամասի սոցիալիկ հարակից ճանապարհը:

Ուրախ ենք, որ ընկերությունը հնարավորություն ունի իր ներդրումն ու մասնակցությունն ունենալ մեր սիրելի քաղաքի զարգացմանն ուղղված, համայնքի բնակիչների համար բարեկեցիկ միջավայր ստեղծելու ծրագրերի իրականացմանը: Սա «Չաարատ Կապան» ՓԲԸ ընկերությունում աշխատող սահմանված աշխատանքների իրականացման եւ գույքի ձեռքբերման համար:

Ըստ համաձայնագրի՝ հատկացվող գումարը կուղղվի սուբվենցիոն ծրագրերի իրականացմանը, մասնավորապես՝ Կապան համայնքի համար ձեռք է բերվելու առքատար 2 մեքենա, վերանորոգվելու է Գեղանուշ բնակավայր տանող ճանապարհը, ինչպես նաեւ կվերանորոգվի Կապան քաղաքի Մուշեղ Յարությունյան

սերտ համագործակցությունը Կապանի համայնքապետարանի հետ՝ ընկերությունը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել համայնքի խնդիրները, եւ հուշագրով սահմանված պարտավորություններից բացի՝ Կապան համայնքի համար այլ ծրագրեր եւ կիրականացվեն: ■

Կորոնավիրուսի տնտեսական եւ սոցիալական հետեւանքների չեզոքացման ծրագրեր

ԱՆՍԵՆՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- թիրախը՝ հենց ծախսի նպատակով է որոշվում,
- շահառու՝ ռեզիդենտ տնտեսավարող, որն ունի բարվոք վարկային եւ հարկային պատմություն,
- օժանդակության ձեւը՝ համաֆինանսավորում, վերաֆինանսավորում, սուբսիդավորում
- հիմնական պայմաններ՝

Վարկի նպատակ	Համաֆինանսավորման չափ	Վերաֆինանսավորման չափ	Սուբսիդավորման չափ
աշխատակիցների	50%	100%	ամբողջությամբ*
հարկերի, տուրքերի եւ պարտադիր վճարների	50%	100%	ամբողջությամբ*
հումքի	40%	50%	6%**
սարքավորումների	25%	50%	5%**
կոմունալ վճարների	45%	90%	10%*
սննդի	30%	50%	8%**

- համաֆինանսավորում՝ լուծում է գրավի պակասի խնդիրը եւ բարելավում է վարկի այլ պայմաններ,
- վերաֆինանսավորում՝ լուծում է արժույթային ռիսկի խնդիրը եւ բարելավում է վարկի այլ պայմաններ,
- սուբսիդավորում՝ լուծում է տոկոսադրույքի խնդիրը եւ բարելավում է վարկի այլ պայմաններ, *Պայմանները գործում են վարկերի մինչեւ 250 մլն համարժեքի համար:* *Դիմելու վայրը՝ բանկեր եւ վարկային կազմակերպություններ:*

ԵՐԿՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- թիրախը՝ գյուղատնտեսության ոլորտ,
- շահառու՝ ոլորտի ռեզիդենտ տնտեսավարող եւ անհատ, որն ունի բարվոք վարկային եւ հարկային պատմություն, ինչպես նաեւ գյուղ. կոոպերատիվներ,
- օժանդակության ձեւը՝ տոկոսադրույքների սուբսիդավորում, իսկ կոոպերատիվների դեպքում նաեւ համաֆինանսավորում (այդ թվում՝ լիզինգի),
- հիմնական պայմաններ՝ բոլոր գյուղատնտեսական նպատակների համար: Դիմելու վայրը՝ իր բանկը եւ վարկային կազմակերպությունը:

ԵՐՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- թիրախը՝ ՓՄՁ-ներ,
- շահառու՝ ռեզիդենտ տնտեսավարող, որն ունի բարվոք վարկային եւ հարկային պատմություն,
- օժանդակության ձեւը՝ վարկերի տրամադրում՝ շրջանառության չափից կախված 2,5 մլն - 50 մլն ՀՀ դրամ,
- հիմնական պայմաններ՝
- ոլորտներ՝ մշակող արդյունաբերություն, կազմակերպում, փոխադրումներ եւ պահեստային տնտեսություն, զբոսաշրջային ծառայություններ, սպասարկման այլ ծառայություններ, առողջապահություն,
- 2019թ. շրջանառությունը կազմել է նվազագույնը 24 մլն դրամ, առավելագույնը՝ 500 մլն դրամ,
- 2019 թվականի յուրաքանչյուր եռամսյակի շրջանառությունը պակաս չի եղել տարեկան շրջանառության գումարի 10%-ից,
- վարկի առավելագույն չափը 50 մլն, վարկերի տոկոսներն առաջին երկու տարիների համար՝ 0%, երրորդ տարում 12%,

- ունի բարվոք վարկային եւ հարկային պատմություն, այսինքն՝ դիմումի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չէ,
- ըստ ԱԶԴԱ տեղեկատվության՝ ժամանակին է կատարել իր վարկային պարտավորությունները: *Դիմելու վայրը՝ Էկոնոմիկայի նախարարության ներդրումների աջակցման կենտրոն:*

ՀԻՆՈՒՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- թիրախը՝ արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցություն,
- շահառու՝ 2-ից 50 աշխատակից ունեցող ռեզիդենտ տնտեսավարող,
- շահառուների պոտենցիալ քանակ՝ 12.000-ից ավել տնտեսավարողներ,
- օժանդակության ձեւը՝ միանվագ դրամաշնորհ, ամեն 5-րդ աշխատողի աշխատավարձի չափով,
- հիմնական պայմաններ՝ 01.01.2020 թվականից մինչեւ 01.04.2020 թվականն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 2-ից մինչեւ 50 վարձու աշխատակից եւ նշված ընկերությունների վճարված աշխատավարձի փաստացի ֆոնդը չի նվազել նշված ժամանակահատվածում: *Պետական եկամուտների կոմիտեն ծանուցում է տնտեսավարողին ծրագրի շահառու հանդիսանալու մասին, ինչից հետո տնտեսավարողը դիմում է ներկայացնում ՊԵԿ-ին:*

ՏԱՆՏԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

- թիրախը՝ աջակցություն միկրոձեռնարկատիրություններին,
- շահառու՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողներ,
- օժանդակության ձեւը՝ միանվագ աջակցություն 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների եւ կատարված աշխատանքների իրացման շրջանառության 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով
- հիմնական պայմաններ՝
- 2019 թվականին հանդիսացել են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, կամ
- 2019 թվականին հանդիսացել են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք եւ ունեցել են հարկերից ազատման նպատակադրված, կամ
- 2020 թվականի հունվարի 1-ից հանդիսանում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ եւ 2019 թվականին չեն հանդիսացել սույն կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված անձ, ինչպես նաեւ հաշվառված չեն եղել որպես անհատ ձեռնարկատեր: *Պետական եկամուտների կոմիտեն ծանուցում է տնտեսավարողին ծրագրի շահառու հանդիսանալու մասին, ինչից հետո տնտեսավարողը դիմում է ներկայացնում ՊԵԿ-ին:*

ՉՐՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- շահառու՝ մինչեւ 14 տարեկան երեխա ունեցող ընտանիքը, որտեղ ծնողները կամ ծնողներից մեկը կորցրել է իր գրանցված աշխատանքը մարտի 13-25 ընկած ժամանակահատվածում եւ մարտի 25-ի դրությամբ ծնողներից ոչ մեկը չունի աշխատանք,
- օժանդակության ձեւը՝ միանվագ մեկանգամյա աջակցություն յուրաքանչյուր անչափահաս երեխայի համար 100.000 դրամի չափով,
- հիմնական պայմաններ՝ աշխատանքից ազատվելուն նախորդող 2 ամիսների ընթացքում միջին ամսական աշխատավարձի չափը չի գերազանցել է 500.000

դրամը: Դիմելու կարիք չկա, համակարգն ինքնուրույն է որոշում շահառուներին եւ փոխանցում գումարը:

ՎԵՅԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- շահառու՝ մարտի 13-30 ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատված անձը
- օժանդակության ձեւը՝ միանվագ մեկանգամյա աջակցություն 68.000 դրամի չափով,
- հիմնական պայմաններ՝
- հունվարի 1-ից մարտի 13-ը ունեցել է գրանցված աշխատանք,
- աշխատանքից ազատվելուն նախորդող 2 ամիսների ընթացքում միջին ամսական աշխատավարձի չափը չի գերազանցել է 500.000 դրամը,
- չի աշխատել ֆինանսական կազմակերպություններում կամ շահումով խաղերի կազմակերպիչների մոտ: *Դիմելու կարիք չկա, համակարգը ինքնուրույն է որոշում շահառուներին եւ փոխանցում գումարը:*

ՅՈՒԹԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- շահառու՝ հղի կինը, ով մարտի 30-ի դրությամբ չունի աշխատանք եւ ում ամուսինն ազատվել է աշխատանքից մարտի 13-30 ընկած ժամանակահատվածում կամ չունի ամուսին,
- օժանդակության ձեւը՝ միանվագ մեկանգամյա աջակցություն 100.000 դրամի չափով: *Դիմելու վայրը՝ դիմելու կարիք չկա, համակարգն ինքնուրույն է որոշում շահառուներին եւ փոխանցում գումարը:*

ՈՒԹԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- շահառու՝ անձինք, ովքեր մարտի 13-30 հանդիսացել են նշված ոլորտների վարձու աշխատողներ կամ անհատ ձեռնարկատերեր՝
- հյուրանոցային եւ հյուրատնային ծառայություններ,
- հանրային սննդի ծառայություններ,
- զբոսաշրջային ծառայություններ,
- վարսավիրանոցների եւ գեղեցկության սրահների ծառայություններ,
- մանրածախ առեւտրի ծառայություններ (բացառությամբ սննդամթերք եւ դեղորայք վաճառողների)
- ցամաքային տրանսպորտի գործունեություն (երթուղային տրանսպորտ),
- նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ),
- սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ)
- զվարճությունների եւ հանգստի կազմակերպման այլ գործունեություն
- օժանդակության ձեւը՝ միանվագ մեկանգամյա աջակցություն.
- վարձու աշխատողի հունվար եւ փետրվար ամիսների միջին աշխատավարձի 50%-ի չափով, բայց ոչ ավել քան 136.000 դրամը, եթե աշխատողն աշխատել է լրիվ դրույքով՝ ապա ոչ պակաս քան 68.000 դրամը,
- Անհատ ձեռներեցներին՝ 2019 թվականի 4-րդ եռամսյակի իրացման շրջանառության 10 %-ի չափով, բայց ոչ ավել, քան 136.000 դրամը,
- հիմնական պայմաններ՝ 2020 թվականի մարտի 13-ից մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում հանդիսացել են Տու-ժած ոլորտների վարձու աշխատողներ: *Դիմելու վայրը՝ online.ssa.am կայքէջ:*

ԻՆՆԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

- շահառու՝ 0-18 տարեկան երեխա ունեցող ընտանիքը, որտեղ երկու ծնողներն էլ չունեն գրանցված աշխատանք,
- օժանդակության ձեւը՝ միանվագ մեկանգամյա աջակցություն յուրաքանչյուր երեխայի համար 26.500 դրամի չափով,

- հիմնական պայմաններ՝ երեխաները եւ ծնողները առնվազն մեկը բնակվում են ՀՀ-ում, չեն հանդիսանում ընտանեկան նպաստ ստացող, եթե մինչեւ մարտի 1-ը ունեցել են աշխատանք, ապա աշխատավարձի չափը չի գերազանցել է 500.000 դրամը: *Դիմելու վայրը՝ online.ssa.am կայքէջ:*

ՏԱՆՏԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

- շահառու՝ բնական գազի մատակարարման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքած այն բնակիչ բաժանորդները, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել բնական գազի սպառման գծով՝ 10 000 դրամը, էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5 000 դրամը,
- օժանդակության ձեւը՝ միանվագ աջակցություն 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված համապատասխանաբար բնական գազի եւ էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50% -ի չափով
- հիմնական պայմաններ՝ բնական գազի եւ էլեկտրական էներգիայի սպառման գծով 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել որոշմամբ սահմանված չափը: *Դիմելու կարիք չկա, գումարը փոխանցվում է բնական գազ եւ էլեկտրական էներգիա մատակարարող ընկերություններին միջոցառման շահառու համարվող բնակիչ բաժանորդների պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ որպես կանխավճար:*

ՏԱՆՏԵՐԿՈՒԹԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

- շահառու՝ բնական գազի մատակարարման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքած այն բնակիչ բաժանորդները, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը կազմել է բնական գազի սպառման գծով՝ 10 001 - 30 000 դրամ ներառյալ, իսկ էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5 001 - 10 000 դրամ ներառյալ:
- օժանդակության ձեւը՝ միանվագ աջակցություն 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված համապատասխանաբար բնական գազի եւ էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 30 % -ի չափով
- հիմնական պայմաններ՝ բնական գազի եւ էլեկտրական էներգիայի սպառման գծով 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը կազմել է որոշմամբ սահմանված գումարը: *Դիմելու կարիք չկա, գումարը փոխանցվում է բնական գազ եւ էլեկտրական էներգիա մատակարարող ընկերություններին միջոցառման շահառու համարվող բնակիչ բաժանորդների պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ որպես կանխավճար:*

ՏԱՆՏԵՐԵՔԵՐՈՐԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

- շահառու՝ սոցիալապես անապահով ընտանիքներ,
- օժանդակության ձեւը՝ միանվագ աջակցություն յուրաքանչյուր ընտանիքին՝ իր նպաստի չափի 50%-ի չափով, որի՝ 70%-ը ընտանիքին տրամադրվում է կանխիկ վճարման ձեւով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին,
- 30%-ը փոխանցվում է որպես բաժանորդի կողմից սպառվող էլեկտրական էներգիայի դիմաց վճար,
- հիմնական պայմաններ՝ ընտանիքները 2020 թվականի ապրիլ ամսվա դրությամբ ընտանեկան եւ սոցիալական նպաստների իրավունք ունեն:

Դիմելու կարիք չկա, նախատեսված գումարի 70%-ը տրամադրվում է կանխիկ վճարման ձեւով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին, իսկ գումարի մյուս հատվածը յուրաքանչյուր բաժանորդ հանդիսացող նպաստառու ընտանիքի անվամբ փոխանցվում է էլեկտրական էներգիա մատակարարող ընկերությանը: Ընդ որում, շահառուի պարտքի առկայության դեպքում այդ գումարն ուղղվում է բնակիչ բաժանորդի ունեցած պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ ձեռնարկվում որպես կանխավճար: Իսկ շահառուի բաժանորդ չհանդիսանալու դեպքում գումարի այս հատվածը եւս կանխիկ վճարման ձեւով տրամադրվում է շահառուին:

Մենդեան 95-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Արամ Յարությունյան.

Կողմնակցությունը եւ երախտիքի

ԿՈՒՆԱԿԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆՆԵՐ

Նա այսպիսին էր



ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երկկողմանի որբության դառը մրուրն առատորեն ճաշակած մարդը պետք է որ, թեկուզ քիչ չափով, չարացած, նեղացած լինի իրեն բաժին հասած բախտից, չսպարած մանկությունից ու պատանեկությունից, մի խոսքով այն ամեն դառնից, ինչ ինքը լիովին ճաշակել է: Բայց տես, որ մարդը, ում մասին հիշողության, երախտիքի երկու տող են ուզում գրել, լիովին դրա հակառակն էր՝ լցված բարությանը, կամեցող ընկածին օգնելու, բարձրացնելու ցանկությունով լի էր գարմանալիորեն գոհ ու շնորհակալ այն ամենի համար, ինչ ուներ: Չունեցածի, չսպարածի, ավելի ճիշտ ունեցած ծանր օրերի, պահերի մասին տրտնջալը, այս կամ առիթով դրանք ներկայացնելը հատուկ չէին նրան: Լցված էր դրական հույզերով, միշտ լավատես էր, ուրիշի հոգսերը՝ կիսող: Երջանիկ մարդու ժպիտ էր խաղում նրա դեմքին:

Լրանում է երեսունհինգ տարի, որ նա հրաժեշտ է տվել երկրային կյանքին: Բայց այսօրվա իրականության մեջ այնքան թարմ են նրա մասին հիշողությունները, որ կարծես նոր-նոր է հեռացել ապրողներին շարքերից:

Ճիշտ այդպես է, որն արդյունք է ապրած այն իմաստավոր կյանքի եւ կատարած բեղմնավոր աշխատանքի, որ թողել է որպես ժառանգություն:

Ավելի քան 21 տարի լինելով Գորիսի շրջանի հրահանգի գործկոմի նախագահի եւ կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարի բարձր եւ պատասխանատու պաշտոններում՝ կարողացել է ոչ միայն լուծել շրջանի տնտեսական, սոցիալ-մշակութային աճող լայնամասշտաբ խնդիրները, այլ նաեւ իր բարձրագույն մարդկային որակներով այնպիսի խոր հետք թողնել մարդկանց հոգում ու սրտում, որ դեռես շատ երկար է հիշվելու՝ կատարած բարի գործերով եւ ժողովրդական ղեկավարի բարձր որակներով:

Մարդու, աշխատավորի նկատմամբ նրա դրսեւորած անկեղծ ուշադրությունը եւ նրբանկատությունը վճռորոշ էին Արամ Յարությունյան ղեկավարի նկարագրի համար: Չենց դա էլ այն գաղտնիք է, որ փորձում են պարզել հետաքրքրվողները՝ թե ի՞նչն էր նրա համաժողովրդական սիրո ու հարգանքի հիմքում:

Առաջին հայացքից ղեկավարման հարցում նման որակները, թվում է, մանրուք են, բայց ես հակառակը կպնդեմ՝ այն ուղղակի որոշիչ է պետական-տնտեսական, սոցիալ-մշակութային խնդիրների լուծման, առողջ հասարակական միջավայր եւ տրամադրություն ձեւավորելու գործում:

Ջարմանալի չափերի էր հասնում Արամ Առաքելիչի՝ մարդկանց ծանաչելու սահմանները:

Ամենալայն առումով՝ շրջանի բոլոր

ընկավայրերի մարդկանց, շատ դեպքերում նաեւ նրանց աշխատանքային, բարեկամական, ընկերական կապերի մասին այնպիսի տեղեկություններ կներկայացներ, որ կապեցներ լսողին: Լայնորեն տեղեկացված էր նաեւ հանրապետության մասշտաբով: Ջարմանում էր, որ մարդիկ նման հարցերում թերանում են կամ տեղեկություններ չեն ունենում:

Այդ ամենը նրա առանձնահատուկ հիշողությունում ֆիքսվում էր գյուղերում, աշխատանքային կոլեկտիվներում, արտադրական, շինարարական հրապարակներում մարդկանց հետ ամենօրյա շփումներից, հանդիպումներից, կոլեկտիվ եւ անհատական զրույցներից: Նաեւ, պատեհ առիթներով, հնձվորի, մեխանիզատորի, ջրվորի, անասնապահի, հովվի հետ նրանց հանապազօրյա սուրբ հացը սիրով կիսելով, որը մի այնպիսի ջերմությամբ էր լցնում մարդկանց հոգիները, որ նման հանդիպումների արձագանքը հնչում-տարածվում էր ամենուր:

Նրա ղեկավարած կոլեկտիվում իշխում էին բարձր պատասխանատվությունը, փոխադարձ վստահությունը եւ խոր հարգանքը:

Աշխատանքից դուրս նրա խոսակցության նյութը դրական թեմաներն էին:

Սիրում էր պատմել իրենից ավագ սերնդի լավ գործերից, արժանավոր, ընթրի-նակելու արժանի մարդկանցից՝ դրանով իսկ երախտիքի ու հարգանքի տուրք մատուցելով անցածին ու դաստիարակչական խոսք ուղղելով երիտասարդությանը:

Ամենացորդ նվիրված էր ընկերներին, չէր սպասի պատասխանի, չնայած շատերի կողմից ինքն էլ արժանանում էր այդպիսի վերաբերմունքի: Գուցե հոգու մի անկյունում դժգոհություն ուներ ծուռ ձգողներից, բայց երբեք ցույց չէր տա, կշարունակեր բարի մնալ: Իր ղեկավարած շրջանի գործերին անձամբ էր տեղեկանում, միջնորդավորված որեւէ կարեւոր գործ չէր անում: Երբ շրջկոմի կոլեկտիվն առավելապես աշխատանքի էր գալիս, ինքն արդեն բոլոր գյուղերից ուներ հավաքած թարմ տեղեկություններ, ու անմիջապես հետետում էին կոնկրետ հանձնարարականները: Մոխրամանի ծխախոտի մնացորդները հուշում էին, որ քարտուղարը կոլեկտիվից 2-3 ժամ առաջ է աշխատանքը սկսել: Գուցե զարմանալի է, բայց այդպես էր:

Նրա ղեկավարությամբ Գորիսի շրջանում հիշատակման արժանի բազմաթիվ գործեր են արվել. նպատակս դրանք նշելը կամ թվարկելը չէ: Ասելիքս արդեն վերջ էնշել եմ: Բայց վերջերս «Երկիր մեղիս» հեռուստաալիքի «Երկիրը երկիր է» հաղորդաշարը ներկայացնում էր Գորիսի տարածաշրջանի շեն ու բարեկարգ, գորիսյան հատուկ շինարարական արվեստով կառուցված, ամրակուռ պատերով ու պարիսպներով տները, ուղղաձիգ փողոցները, հասարակական եւ մյուս կառույցները, որոնք ոչ միայն այց են շյույում, այլ նաեւ հպարտություն են ներշնչում՝ Կորնիձոր, Տեղ, Քարաշեն, Կնձորենկ, Յարթաշեն, Վերիշեն, Ակներ, Խոտ, Շինուտայր, Յալիձոր: Ժամանակի ամենաբարձր չափանիշներով այդ բնակավայրերը նախագծվել ու կառուցվել են Արամ Առաքելի Յարությունյանի ամենակատիվ ջանքերով ու ղեկավարությամբ:

Դե ինչ, քանի որ նրա հետ ու ղեկավարությամբ են ավելի քան ութ տարվա աշխատանքային կենսագրություն ունեն, այդ Մեծ մարդու նկատմամբ որպես երախտիք եւ բարի հիշողություն, ցանկացա նրա եզակի խառնվածքի այս մի քանի նրբերանգը ներկայացնել: ■



ԿՅԱՆՔԻ ՈՐՈՒՆ

Ծնվել է 1925 թ. մայիսի 1-ին Գորիսի շրջանի Տաթև գյուղում: 1926 թ. ծնողները մահացել են եւ մինչեւ 1937 թ. մնացել է պապի խնամքի ներքո: Այդ թվականին մահացել է նաեւ պապը: 1937-42 թթ. գտնվում էր Գորիսի մանկատանը: Մանկատանը գտնվելու ընթացքում՝ 1938-42 թթ. սովորել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում եւ ավարտել այն: 1942-ի նոյեմբերին՝ 17 տարեկանում, կամավոր մեկնել է սովետական բանակ եւ Բաքվի ռազմական ուսումնարանում դասընթացներ անցնելուց հետո՝ 165-րդ հրաձգային բրիգադի կազմում մասնակցել Մեծ հայրենական ռազմական գործողություններին:

Ծանր վիրավորվելուց հետո 1943-ին զորացրվել է բանակից: Նույն տարում սկսել է աշխատանքային գործունեությունը. 1943-44 թթ. Գորիսի մանկատան ավագ պիոներ-ջոկատավարն էր: 1944 թ. օգոստոսից մինչեւ 1946 թ. հոկտեմբեր կոմերիտմիության Գորիսի շրջկոմի երկրորդ քարտուղարն էր: 1946 թ. հոկտեմբերից մինչեւ 1948 թ. հոկտեմբեր սովորել է ԳԿԿ կենտկոմին կից երկամյա կուսակցական դպրոցում: 1948 թ. հոկտեմբերից մինչեւ նույն տարվա դեկտեմբեր կուսակցության Գորիսի շրջկոմի ռազմական բաժնի վարիչն էր: 1948 թ. դեկտեմբերին ընտրվել է կոմերիտմիության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար եւ աշխատել մինչեւ 1953 թ. մարտ ամիսը:

1953 թ. մարտից մինչեւ 1956 թ. սեպտեմբեր աշխատել է ԳԿԿ Գորիսի շրջկոմում, սկզբում՝ գյուղբաժնի, ապա՝ կազմակերպական բաժնի վարիչ:

1956 թ. սեպտեմբերին գործուղվել է Մոսկվա՝ բարձագույն կուսակցական դպրոցում սովորելու: Ավարտելով կուսակցական դպրոցը, 1960 թ. օգոստոսին ընտրվել է ԳԿԿ Գորիսի շրջկոմի 2-րդ քարտուղար եւ աշխատել մինչեւ 1962 թ. մարտը:

1962 թ. մարտից մինչեւ 1963 հունվար ընկած ժամանակաշրջանում կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղարն էր: 1963-74 թթ. աշխատել է ժողովրդական դեպուտատների Գորիսի շրջանային սովետի գործկոմի նախագահ:

1974 թ. հունվարին ընտրվել է Յայաստանի կոմունիստական կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար եւ աշխատել մինչեւ 1982 թ. հունվարի 8-ը. աշխատանքից ազատվել է իր դիմումի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով: Այդ ժամանակվանից հանրապետական նշանակության անհատական թոշակառու էր:

Արամ Յարությունյանը ԳԿԿ կենտկոմի անդամության թեկնածու էր, Յայակական ՍՄԳ 9-րդ եւ 10-րդ գումարումների Գերագույն սովետի պատգամավոր:

Պարգևատրվել է աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով եւ մի քանի մեդալով:

Վախճանվել է 1985 թ. փետրվարի 15-ին:

Վերջին հանգրվանն է գտել ծննդավայր Տաթև գյուղում: Նրա մահվան կապակցությամբ մահախոսական է հրապարակվել Կարեն Դեմիրձյանի, Բաբկեն Սարկիսովի, Ֆադեյ Սարգսյանի եւ հանրապետության մյուս ղեկավարների ստորագրությամբ: Արամ Յարությունյանն ամուսնացած էր Արմենիկ Դովեմյանի հետ, ունեցել են չորս զավակ՝ Մելանիս, Տաթևիկ, Գագիկ, Արտյուշ:

Ֆրանսահայ բանաստեղծ Ռուբեն Մելիքի հետ



ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

1978-ին Գորիս էր այցելել ֆրանսահայ բանաստեղծ, Ֆրանսիայի Գեղարվեստի ակադեմիայի անդամ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր Ռուբեն Մելիքը: Որպես թարգմանիչ՝ նրա հետ էր Հայաստանի գրողների միության տան դիրեկտոր, ինչպես ինքն էր ներկայանում՝ «Գորիսի հարս» (ամուսինը Ննձորեսկից էր) Առֆի Ավագյանը, ում միջոցով հայ ընթերցողը ծանոթացել է Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանի» հետ:

Երեք օր նրանց ուղեկցն էի: Հյուրընկալության վերջին օրը, կուսակցության շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Արամ Հարությունյանի հանձնարարությամբ, հրաժեշտի ճաշի սեղան էր պատրաստվել Հալիձորի անտառում՝ դեպի Տաթևի վանական համալիր, դեպի Որոտանի կիրճ նայող քարափի բարձունքին, ուղղակի գետնին: Հասկանալի է, որ մեր հյուրն անչափ շոյված էր շրջկոմի առաջին քարտուղարի եւ ուշադրությունից, եւ ներկայությունից:

Հյուրը երկար ժամանակ չէր կարողանում հարմարվել ու նստել գետնին: Ավտոմեքենայից նստելատեղ հանեցին եւ մոտեցրին, բայց նա հրաժարվեց օգտվել դրանից ու համարյա պառկեց ծալապատիկ նստած Արամ Առաքելիչի կողքին:

Անցած օրերի ընթացքում հասցրել էի նկատել, որ շատ ժուժկալ մարդ է. ոգելից խմիչք համարյա չէր օգտագործում, պահանջվուտ չէր նաեւ ուտեստների նկատմամբ, բայց ամեն նոր ուտեստ տեսնելուց զարմանքն էր արտահայտում երեխայի նման:

Այդ օրն էլ խիստ զարմացած էր՝ սեղանին խորված կարմրախայտ տեսնելով, որը հաճույքով վայելում էր տնական գինու հետ:

Առաջին քարտուղարի հերթական խոսքից հետո խնդրեց օգնել, որ խոսք ասելու համար ոտքի կանգնի: Թարգմանիչը՝ ֆրանսերեն հասկացրեց՝ կարող է նաեւ նստած խոսել, ինչպես մյուսները, բայց նա իր հայերենով առարկեց՝ խոսելու է միայն կանգնած, եւ այն էլ՝ միայն հայերեն:

Մշխարհի շատ անկյուններում եմ եղել, իսկ Շվեյցարիայում լինում եմ համարյա ամեն տարի, որտեղ եւս բնությունը, լեռները գեղեցիկ են, բայց այնտեղ լեռները կին եղած են, հոս տղամարդ լեռներ են, - խոսքի հետ նաեւ ձեռքով ցույց էր տալիս դիմացի լեռնագագաթները, հետո շրջվելով դեպի շրջկոմի առաջին քարտուղարը, ուղիղ դիմեց նրան:

Պարոն Արամ, գիտե՞ք, որ Ֆրանսիան գինու հայրենիքն է, բայց նույնիսկ այնտեղ դժվար թե ես կարողանամ Ձեզ նման անմահական խմիչքով հյուրասիրել, - ու ցույց տվեց ձեռքի բաժակում պեծին տվող գինին:


Այս խոսքերի վրա սեղանակիցներից երջանկահիշատակ Սաշիկ Ասատուրի Հարությունյանը ծոցագրպանից մի քառածալ գունազարդ թուղթ հանեց եւ մեկնեց նրան: Վերջինս ձեռքի բաժակում տվեց կողքինին, վերցրեց թուղթը եւ զարմացած սկսեց բացել: Նույնիսկ հեռվից կարելի էր տեսնել, որ բազմակի բացել-փակելուց թուղթը համարյա չորս մասի էր բաժանվել: Մեր հյուրը թուղթը խնամքով փռեց այնտեղ, որտեղ քիչ առաջ ինքը նստած էր, նշան արեց, որ լուսանկարչական ապարատն իրեն տան եւ հետո էլ բարձրաձայն կարգում էր: Նրան զուգահեռ Սոֆի Ավագյանը թարգմանում էր: Փաստաթուղթը վկայում էր, որ այս տարածքում աճեցրած խաղողից քամված գինին 1913 թվականին մասնակցել է Փարիզում անցկացված միջազգային մրցույթին եւ նվաճել գլխավոր մրցանակը:

Տասնյակ անգամներ սեղան եմ նստել Արամ Առաքելիչի հետ: Ուշադիր էր շրջապատի, հատկապես երիտասարդների նկատմամբ: Անպայման իր ձեռքով նրանց էր հրամցնում ուտեստի լավագույն պատառները: Բայց այս մասին չէ, որ ցանկանում եմ պատմել, այլ այն, որ նա բազմազան համով-հոտով ուտեստները թողած՝ վայելում էր երեխա թե իր մտածած ու իր ձեռքով ստեղծած նոր, շատ պարզ ճաշատեսակները...

Լուսանկարներ Արամ Հարությունյանի ընդանեկան ալբոմից



Կենսագրություն, որ նաեւ Գորիսի պատմությունն է



ԽԱՍԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կան մարդիկ, որոնց ապրած կյանքով կարելի է բնութագրել այդ սերնդին: Նրանց գործերն այդ մարդկանց զուտ կենսագրությունը չեն, այլ դառնում են կենդանի վավերագրեր, որոնք արժեք ունեն ու մնայուն են, խոսում: Այդ մարդկանցից է գորիսեցի Արամ Հարությունյանը, ով աշխատել է Գորիսի շրջանային խորհրդի գործկոմի նախագահ, ապա կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար:

Արամ Հարությունյանին գորիսեցիները եւ տարածաշրջանի մարդիկ պարզապես ասում էին՝ Արամ Առաքելիչ: Այդպես ասելով, նրանք ասես կրճատում էին պաշտոնային եւ սովորական մարդու միջեւ եղած տարածությունը: Իսկ տարածություն պահելն Արամ Հարությունյանի համար խորթ երեւոյթ էր, երեւոյթ, որ անջրպետ էր ստեղծում պաշտոնային եւ սովորական մարդու միջեւ: Իսկ Արամ Հարությունյանի համար մարդը, լինի բանվոր, թե պաշտոնյա, նախեսառաջ մարդ էր, մարդ անհատականությամբ: Նա իր գրասեղանին միշտ պահում էր բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների հեռախոսահամարները, հասցեները:

Երբեք չէր դիմում քարտուղարուհու օգնությանը: Նրա աշխատելու տարիներին պաշտոնյաները միշտ զգոն էին, զգաստ. մեկ էլ տեսար անսպասելիորեն Արամ Առաքելիչը հայտնվեց: Կգնար որեւէ ձեռնարկություն՝ առանց զանգի, առանց իմաց տալու եւ նախ կողեկտիվի ղեկավարի աշխատասենյակը չէր մտնի: Սկզբից մտնում էր աշխատասենյակի տեղամասերը, գրուցում բանվորների հետ, ծանոթանում նրանց խնդիրներին եւ «փաթեթով» մտնում կողեկտիվի ղեկավարի աշխատասենյակը: Եվ լուծում էր բոլորին հուզող հարցերը: Իր այդ քայլն այսպես էր բացատրում. բանվորն իր գործն ինչու պիտի թողնի, հասնի իր աշխատասենյակը, հերթ կանգնի, էն էլ ի՞նչ իմանաս, այդ օրը նրան կհաջողվի մտնել ղեկավարի մոտ:

Ես այն երջանիկներից եմ, որ շփվել-աշխատել եմ նրա հետ, նրա հետ ծանապարհ անցել: Եվ, գիտե՞ք, երբ մարդու հետ ծանապարհ ես գնում, նրան ավելի լավ ես ծանաչում: Առավոտյան ժամը 8-ին Գորիսից դուրս էինք գալիս եւ միայն երեկոյան ժամը 8-ին հասնում էրեան: Ուշ հասնելու պատճառն այն էր, որ Ջերմուկի կամրջից մինչեւ Երեան մարդիկ դիմավորում էին նրան, ասում-խոսում նրա հետ: Թե՛ պետականում, թե՛ նախարարություններում՝ ամենուր ջերմ ընդունելության էր արժանանում: Ու ամեն տեղ էլ պահանջ էր դնում, այսպես ասելով՝ քո նախարարությունը Գորիսում ի՞նչ կարող է անել: Ոչ մեկը նրա խոսքից դուրս չէր գալիս: Այդպես կառուցվեցին արդյունաբերական կոմբինատը, «Միկրոշարժիչ» գործարանի, տրիկոտաժի ֆաբրիկայի 2-րդ մասնաշենքերը, Գորիսի ինստիտուտը, հացի գործարանը եւ այլն: Իսկ ինձ ամենուր այսպես էր ներկայացնում՝ Տաթևիցի ինժեներն է, թեեւ այդ ժամանակ արդեն շինվարչության պետ էի: Նրա համար Տաթևիցի կամ գեղեցրած իմ պաշտոնն ավելի հնչել էր, քան շինվարչության պետի պաշտոնը:

Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը՝ արտակարգ դրության պայմաններում



Էջ 1 | Լանց ջախջախիչ մեծամասնությունը մեկուսացել է տներում: Այս տարվա առաջին եռամսյակում գրանցվել է 213 արտակարգ դեպք, ծանապարհատրանսպորտային պատահարների դինամիկան հետեյալ պատկերն ունի՝ հունվարին՝ 7, փետրվարին՝ 8, մարտին՝ 8 դեպք: Հրդեհների առումով որոշակի աճ է գրանցվել: Ի

դեպ, հրդեհներ լինում են զարնագյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, երբ ոմանք կրակի են տալիս իրենց այգիների ու բանջարանոցների, նաև ցանքատարածությունների չոր խոտն ու մացառները: Երբեմն կրակն աչքաթող անելով, հրդեհը մեծ ծավալներ է ընդունում, եւ գործին միջամտում են վարչության հրշեջ-փրկարարները: Մեր գրույցի նախորդ օրը տխուր վերջաբանով պատահար էր եղել. փակ դուռ են բացել, դռան թակոցներին չէին արձագանքում, մի դեպքում հիտունն անց տղամարդու դիակ են հայտնաբերել, մյուս դեպքում չարձագանքողն անկողնային հիվանդ միայնակ մարդ էր, ում օգնություն է ցուցաբերվել:

Ա. Հարությունյանի հետ մեր գրույցը շատ երկար չտեց, շուտով տեսակոնֆերանս պիտի սկսվեր: Սա եւ կորոնավիրուսի հետեւանքով պայմանավորված երեւոյթ է՝ ինչպես հեռավար ուսուցումն ուսումնական գործընթացում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ինչ է կատարվում Քաջարանում. հանքաքարի արդյունահանման ծավալները մեծանում են, պետությանը վճարվող հարկերը՝ նվազում



Պետական եկամուտների կոմիտեի ներկայացրել է 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը: 2020թ. առաջին եռամսյակում 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված գումարները կազմել են ավելի քան 245 մլրդ 633 մլն դրամ:

Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 202 մլրդ 793 մլն, իսկ մաքսային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 4 մլրդ 839 մլն դրամ:

1000 խոշոր հարկ վճարողների ցանկը գլխավորում է «Գազպրոմ Արմենիան»՝ ավելի քան 17.7 մլրդ դրամ մուտքերով: Երկրորդ տեղում «Գրանդ Տոբակո»-ն է՝ ավելի քան 15 մլրդ դրամ մուտքերով: Երրորդը՝ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ»-ն է՝ ավելի քան 5 մլրդ դրամ մուտքերով: Չորրորդ տեղում «ՍիՓԷԼ ՕԻԼ»-ն է՝ ավելի քան 4 մլրդ դրամ մուտքերով: Հնգրորդը եզրագրված է «ՄՍՍ Հայաստան»-ը՝ ավելի քան 3.8 մլրդ դրամ մուտքերով:

Խոշոր հարկատուների տասնյակում են «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Ֆիլիպ Մորրիս Արմենիա», «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Ֆլեշ» եւ «Ալվիլոն թրեյդ» ընկերությունները: Ցանկն ամբողջությամբ հասա-

նելի է ՊԵԿ կայքի «Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր» բաժնում:

Արմենյան

Յ.Գ. «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն 2020 թ. 1-ին եռամսյակի արդյունքներով խոշոր հարկատուների ցանկում գրավել է 6-րդ տեղը՝ պետությանը վճարելով մոտ 3.5 մլրդ դրամ: Նահանջն ավելի ակնհայտ է դառնում, երբ այդ ցուցանիշը համեմատում ենք նախորդ տարվա ցուցանիշների հետ:

Այսպես՝ ընկերությունը 2019 թ. 4-րդ եռամսյակում վճարել է մոտ 10.7 մլրդ դրամ հարկ:

2019 թ. 1-ին եռամսյակում վճարել է 6.7 մլրդ դրամ:

Ստեղծված իրավիճակն ավելի առեղծվածային է դառնում, երբ իմանում ենք, որ մարզի ամենախոշոր հարկատու վերջին տարիներին էականորեն կրճատել է Սյունիքում իրականացվող սոցիալական ծրագրերը:

Իրավիճակի տարօրինակությունն ավելի է շեշտվում, երբ ակնհայտ է դառնում մեկ այլ հանգամանք. ինչպես նախորդ իշխանությունները, այնպես էլ գործող իշխանությունները չեն ուզում բացահայտել, թե ովքեր են «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետերերը, ինչպես եւ ինչ ձանապարհով են նրանք դարձել այդ ընկերության բաժնետեր:

Հայրենի կառավարությունը համառորեն չի պատասխանում հարցին, թե գործող օրենսդրությամբ սահմանված ի՞նչ փաստաթղթերի հիման վրա է վերջին երկու տարում կատարվում Արժույթի պաշտպանության ընդլայնում:

Հայրենի կառավարությունն այդպես էլ չի ուզում հանրությանը ներկայացնել, թե ով է Հայաստանի ամենախոշոր հանքարդյունաբերական ընկերության տնօրեն Միեր Պոլսկովը:

«Սյունյաց երկիր»

Ռազմիկ Վարդանյան. մեծահամբավ գիտնականը Սյունյաց աշխարհից

1950-ական թվականներն էին...

Ռազմիկ Վարդանյանը սովորում էր Գորիսի շրջանի Տաթեյ գյուղի միջնակարգ դպրոցում: Թեեւ հրաշալի էր սովորում բոլոր առարկաները, բայց ամենաշատը սիրում էր մաթեմատիկան: Սակայն ոչ ոք չգիտեր, որ օրերից մի օր քիմիայի հերթական դասը ձակատագրական պիտի դառնա նրա համար: Այդ օրը Ռազմիկը սովորականի պես մտավ դասարան: Դասավանդող ուսուցչուհու պահվածքը գայրաջրեց ապագա գիտնականին, եւ վերջինս խոստացավ՝ ուսումը կշարունակի քիմիա մասնագիտացմամբ, կավարտի, հետ կգա հարազատ գյուղ ու կփոխարինի այդ ուսուցչին:

...Տարիների արանքից ասես վերցվում է շղարշն ամբողջությամբ, ու բացվում են ձերմակ թերթի վրա գրված կենսագրականի մանրամասները, որտեղ երկար ծանապարհ անցած գիտնականը պիտի փաստեր՝ այո, կարողացել են կյանքի կոչել ամենամեծ խոստումը:

Ավելին, նա կարողացել է համառ ջանքերի շնորհիվ վաստակել հայտնի քիմիկոսի, քիմիական գիտությունների դոկտորի, պրոֆեսորի, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի հայաստանյան մասնաճյուղի լիիրավ անդամի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի քիմիական կինետիկայի ասպարեզի անդամի, ակադեմիկոսի գիտնականի, Գորիսի պետական համալսարանի երկարամյա դասախոսի բարձր տիտղոսները:

Խորհում է սյունեցի գիտնականը՝ ծանր ու թեթեւ անելով անցած ծանապարհի նշանակալի ձեռքբերումները:

Տաթեյի միջնակարգ դպրոց, այնուհետեւ Երեւանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ: Հետո Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ: Կյանքի անիվը գլորելով հասել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղի ասպիրանտուրա, որտեղ էլ 1971թ. պաշտպանել է թեկնածուական թեզը՝ «Շղթաների հատման փուլերում ինհիբիտորների ռեզենտացիան» թեմայով, իսկ 1986 թվականին դոկտորական թեզը՝ «Խոլեստերինային հեղուկ բյուրեղների ծերացումը եւ կայունացումը»:

Աշխատանքային կարիերայի մեկնարկը Ռազմիկը տվեց նույն ինստիտուտում աշխատանքի անցնելով՝ պրոֆեսոր Եվգենի Դենիսովի լաբորատորիայում աշխատելով կրտսեր գիտաշխատող:

Հայրենիքի կարոտը ձգեց-կանչեց Ռազմիկ Վարդանյանին, եւ նա 1973 թվականին տեղափոխվեց Հայաստան ու որպես լաբորատորիայի վարիչ՝ աշխատանքի անցավ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) պոլիմերային սոսիմների գիտահետազոտական ինստիտուտում: Այդ ժամանակ էր, որ նրա ղեկավարած լաբորատորիայում ներդրվեց սոսիմների տասնինը հեղինակային իրավունք, որոնցից շատերը կիրառելի են գտնում նաեւ մեր օրերում:

...Խոհերը գիտնականին տանում են Խորհրդային Միության ժամանակաշրջան, որտեղ գնա-



հատված էին գիտնականն ու արժեւորված յուրաքանչյուր ձեռքբերում: Ու թեեւ ապրում ու գործում էր Հայաստանում, սակայն Սյունյաց լեռնաշխարհի կարոտը ձգում, երազի պես կանչում էր... Եվ ճիշտ ժամանակին աշխատանքի է հրավիրվում ՀՀ ԳԱ Գորիսի ֆիզիկա-տեխնիկական բաժանմունք, որտեղ սկսում է զբաղվել խոլեստերինային հեղուկ բյուրեղների կայունացման խնդիրներով, իսկ 1984-1990 թվականներին իր ուսերին է վերցնում կենտրոնի աշխատանքները: Այդ տարիներին մշակում է քիմիական ռեակտիվների եւ մաքուր նյութերի պահպանման ժամկետների որոշման նոր մեթոդ, որն էլ հիմք է հանդիսանում Գորիսի ֆիզիկա-տեխնիկական կենտրոնը վերանվանելու «Քիմիական ռեակտիվների կյանքի տեղողության եւ պահպանման ժամկետների որոշման համամիութենական կենտրոն»:

Գիտական աշխատանքները չեն խանգարում, որ Ռազմիկ Վարդանյանը զուգահեռ դասախոսի ՀՀԻՀ Գորիսի մասնաճյուղում՝ ղեկավարելով 1990 թվականին հիմնադրված ընդհանուր տեխնիկական առարկաների, այնուհետ՝ կենսաքիմիայի ամբիոնը: Իսկ 1997-2006 թվականներին Ռազմիկ Վարդանյանը ստանձնում է նաեւ ՀՀԻՀ Գորիսի մասնաճյուղի, 2006 թվականից՝ Գորիսի պետական համալսարանի ուսումնական, գիտական գծով փոխտնօրենի պաշտոնները:

Նա հաստատության քիմիայի գիտական լաբորատորիայի հիմնադիրն է, որտեղ էլ մինչեւ օրս շարունակում է գիտական հետազոտություն կատարել եւ այն ծառայեցնել ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների գիտական առաջընթացին:

80-ամյա գիտնականը երիտասարդներին փոխանցել մինչ այսօր էլ փոխանցում է տարիներով ձեռքբերած գիտելիքները, որի շնորհիվ նրա ղեկավարությամբ հաջողությամբ թեկնածուական թեզեր է պաշտպանել Գորիսի պետական համալսարանի վեց երիտասարդ գիտնական:

Նա գրախոսել է դոկտորական եւ թեկնածուական տասնյակ աշխատանքներ:

Քիմիկոսի գիտական հետազոտություններն ուշադրության են արժանացել բազմաթիվ գիտնականների ու հետազոտողների կողմից, ովքեր իրենց աշխատություններում օգտագործել են ձեռք բերված

արդյունքներն ու կատարել հղումներ:

Այսքան բարձունքներ գրաված գիտնականը վստահորեն պնդում է՝ այսօրվա սերունդն ավելի խելացի է, եւ գիտության ոլորտում նոր հաղթանակներն ապահովված կլինեն հետեւողական ջանքերի շնորհիվ:

Ռազմիկ Վարդանյանի հեղինակած շուրջ 250 գիտական հոդվածները մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես նախկին խորհրդային երկրների գիտնականների շրջանում, այնպես էլ Կանադայում, Հնդկաստանում, Լեհաստանում, Ռումինիայում եւ այլուր:

Գիտական ասպարեզում ամենամեծ ձեռքբերումը համարելով ՌԴ-ում ուսուցանած տարիները, այնուհանդերձ Ռազմիկ Վարդանյանը կարողանում է ավելի մեծ հաջողություններ գրանցել, որի շնորհիվ 1981 թվականին ընտրվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի քիմիական կինետիկայի ասպարեզի անդամ:

Գիտնականը նաեւ ՀՀ նախագահի, հանրապետության գիտության եւ կրթության նախարարության կողմից արժանացել է մեդալների ու պատվոգրերի:

Տակավին անելիքներ շատ ունի Ռազմիկ Վարդանյանը, գիտական հետազոտության նոր առաջարկներ կան, որոնք դեռ կյանքի պիտի կոչի:

Նրա բազում հետազոտությունների հիմքը հանդիսացել է տարբեր տարածաշրջաններում աճող դեղաբույսերում առկա հակաօքսիդիչների քանակության եւ ակտիվության որոշումը: Այս անգամ նա կզբաղվի նույն հակաօքսիդիչների ակտիվությունն արդեն ջրային միջավայրում կիրառելու աշխատանքով:

Սիրում է ընկերություն անել, սակայն կյանքի բերումով ամենահարազատ ընկերները հեռու են իրենից: Աղաբեկով Վարդանյանը Մինսկում է, ընկերներից ոմանք՝ Մոսկվայում, Բաշկիրիայում, բայց հեռավորությունն ու տարիները չեն կարողացել ստվերել մեծ ընկերությունը:

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռազմիկ Վարդանյանը նշում է իր 80-ամյակը:

Շնորհավոր ծնունդդ, Սյունյաց աշխարհի մեծահամբավ գիտնական: Ամուր առողջություն Ձեզ, նպատակների իրականացում եւ նորանոր հաղթանակներ գիտական աշխարհում:

ԱՐԵՎԻԿԱ ԱՐԵԼՅԱՆ

Ճանաչված պարմաբանի ութ տասնամյակը

Մայիսի 1-ը պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Կլիմենտ Զարոյանի ծննդյան օրն է: Պատմաբանը, ով Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի լավագույն հետազոտողներից է հանրապետությունում և բազմաթիվ գրքերի հեղինակ, դարձավ 80 տարեկան:

Այս է բացել 1940-ին Կապանում՝ շիկահողմի ծնողների ընտանիքում: Հայրը՝ Ամասիա Զարոյանը, կամավոր մեկնել է ռազմաճակատ և 1942-1943 թթ. հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել Կովկասի ճակատամարտին, ծանր վիրավորվել, պարզատարվել Կարմիր աստղի շքանշանով: Ուստի պատահական չէ, որ ավագ որդին՝ Կլիմենտը, հետագայում բարձրագույն կրթություն ստանալով, իր ողջ կյանքը նվիրեց Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի զավակների ներդրած ավանդի հետազոտման ծանր ու դժվարին, բայց շնորհակալ գործին և դարձավ այդ հիմնահարցի լուսաբանման նվիրյալ մասնագետը:

1961-1966 թթ. սովորել է գերազանցությամբ ավարտել է Երեւանի ի. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի պատմության բաժինը (ցերեկային ուսուցում): Ուսանողական տարիներին հանդես է եկել «Մեծ եղեռնը», «Հայ կամավորական շարժումը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» այն ժամանակվա համար շատ համարձակ գեկուցումներով: 1966 թ. ապրիլին մասնակցել է Բաթումիում կայացած Անդրկովկասյան հանրապետությունների մանկավարժական ինստիտուտների ուսանողական գիտական նստաշրջանին, հանդես եկել «Արեւմտահայերի ազգային-ազատագրական շարժումը 1914-1916 թթ.» գեկուցումով:

Բուհն ավարտելուց հետո երկու տարի աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում՝ կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, ձեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ, «Բանբեր Հայաստանի արխիվներին» հանդեսում տպագրել առաջին գիտական ուսումնասիրությունները: Այնուհետև (արտադրությունից կտրված) հաջողությամբ ավարտել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան, մինչ

այժմ գիտահետազոտական աշխատանք է տանում նույն ինստիտուտում՝ նախ՝ կրտսեր, ապա ավագ և առաջատար գիտաշխատող, 2005 թ.՝ գլխավոր գիտաշխատող: Եղել է «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին», այնուհետև՝ «Հայ գիտականության պատմությունը» թեմատիկ խմբերի ղեկավար:

1979-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1994-ին՝ դոկտորական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ:

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությունից զատ նրա հետաքրքրությունների տեսադաշտում և լուսաբանման շրջանակում են եղել նաև հայկական ազգային զորամիավորումների և զինվորական մամուլի պատմության, հայ մարշալների և հայկական բանակի գեներալների կենսագրությունների անհայտ էջերի լուսաբանման հիմնահարցերը: Համենայն դեպս, իր նշանակալի գործն է համարում «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ. ուսումնասիրությունը (նույն տարում ունեցել է երկու հրատարակություն): Գրքում, որ նրա դոկտորական աշխատանքն է նաև, առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվել է Հայաստանի առաջին հանրապետության բանակի և հորհրդային Հայաստանի ազգային զորամիավորումների ամբողջական պատմությունը:

Կլիմենտ Զարոյանյանը հրատարակել է 35 մենագրություն՝ 500 տպագիր մամուլ ծավալով, համահեղինակ է 12 այլ գրքի, մասնակցել արխիվային փաստաթղթերի և նյութերի 4 ժողովածուի և «Հուշամատյան» հիմնական քառասորայակի կազմման և խմբագրման աշխատանքներին: Տարբեր պարբերականներում սփռված են նրա 110-ից ավելի հոդվածներ, որոնցում լուսաբանվում են երկրորդ աշխարհամարտին առնչվող տարբեր, նեղ մասնագիտական հիմնահարցեր, ահավասիկ՝ գերմանական բանակի հայկական լեգեոնը («Գարուն» ամսագիր, 1994, N 7): Ի դեպ, պատմաբանը հոգու պարտք է համարել ներկայացնելու ջավախքահայերի և արցախցիների մասնակցությունը Մեծ հայրենականին, որոնց անդրադարձել է առանձին գրքերով:

Բացի սեփական մենագրություններից՝ Կլիմենտ Զարոյանյանը խմբագրել է 32 և գրախոսել 15 գիրք: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է չորս թեկնածուական ատենախոսություն և պաշտպանության է պատրաստվում եւս երկու թեկնածուական ատենախոսություն: Նրա ընդհանրախոսությամբ պաշտպանվել է հինգ ատենախոսություն, որից մեկը՝ դոկտորական: Գիտական կարգեր պատրաստելուն և գիտահետազոտական աշխատանքներ կատարելուն զուգընթաց տարիներ ի վեր զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով մի շարք բուհերում (Երեւանի պետական համալսարանի Իջեանի մասնաճյուղ, Գավառի պետական համալսարան, Դավիթ Անհաղթ համալսարան), վարել պետական քննական հանձնաժողովների նախագահի պարտականությունը:



Հպարտության զգացում էր ունենում, երբ աշխատելով արխիվում, հանդիպում էր հայրենակիցների՝ սյունեցիների մասին նյութերի: Ահագին փաստական նյութ էր հավաքել, և հույս էր փայփայում, որ մի օր լույս աշխարհի կգա ուսումնասիրություն՝ երկրորդ աշխարհամարտում սյունեցիների մասնակցության մասին: 2017 թ. Սյունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի հովանավորությամբ ընթերցողի սեղանին դրվել «Սյունիքի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» մեծադիր աշխատությունը: Միաժամանակ գրքում ներկայացված է Հայրենական մեծ պատերազմում զոհված սյունեցիների ցուցակը, ինչպես նաև թիկունքի աշխատավորների օգնությունը ռազմաճակատին:

Նրա գիտական աշխատանքն ըստ արժանվույն գնահատվել է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Ռուսաստանի Հանրապետությունում. արժանացել է մեդալների, գովեստագրերի, պատվոգրերի, իսկ 2009 թ. մայիսին Հանրապետության տոնի կապակցությամբ հանրապետության նախագահի ձեռամբ ստացել է «Մովսես Խորենացի» մեդալ:

Չնայած առաջացած տարիքին և առողջական ինչ-ինչ խնդիրներին՝ Կլիմենտ Զարոյանյանը շարունակում է գիտական ակտիվ կյանքով ապրել, ինչի արդյունքում լույս են ընծայվում նոր ուսումնասիրություններ: Բառացիորեն վերջերս տպագրության հանձնեց Խորհրդային Միության հերոս, ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Իվան Իսակովի մասին պատմող գիրքը, հաջորդը նվիրված է հայ ժողովրդի զավակների մասնակցությանը Լեւինգրադի հերոսական պաշտպանությանը (նախկինում լույս ընծայված գրքի երկրորդ՝ լրամշակված հրատարակություն): Նաև մտահղացում ունի 5 հայ մարշալների ներկայացնելու առանձին գրքով: Այժմ աշխատում է հայ ծովայինների մասին պատմող գրքի վրա: 40-45 տարի աշխատելով Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության արխիվներում, փաստական հարուստ նյութ է հավաքել հայ ծովայինների մասին: «Շատ հետաքրքիր գիրք կլինի», - ասում է պատմաբանը, բայց այն լույս աշխարհ գալու համար նորին մեծությամբ հովանավորի անհրաժեշտություն կլինի:

Ի սրտե շնորհավորում ենք մեր հայրենակից պատմաբանին՝ 80-ամյա հորեյլանի առթիվ, նախառաջ մաղթում առողջություն, կենսունակություն և նոր բացահայտումներ՝ մեր հայրերի և պապերի մղած սրբազան պատերազմի անհայտ էջերը լրացնելու հույժ կարեւոր և անհրաժեշտ գործում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Այդ բազմազարգար գոյական անունը՝ Ժողովուրդ

ՀԱՏՎԱԾ

ՎԱՐԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Այդ բազմազարգար գոյական անունը՝ Ժողովուրդ... Սիրելի եւ անծանոթ, հազարադեմ ու դիմազուրկ, սրբազան խաչ ու պղնձե մանրադրամ...

Ոչ ոք չի տեսել ժողովրդին՝ իր հավաքականության մեջ եւ ոչ ոք չի լսել նրա հավաքական ձայնը:

- Բայց միթե դա խանգարում է, որ վիայակոչենք նրան, խոսենք, մեր միտքը հավաստենք, ընդդիմախոսենք, երբեմն նաև սպառնանք՝ նորին գերազանցություն ժողովրդի անունով. «Պետք է լսել ժողովրդի կարծիքը, իսկ նա մտածում է ահա

այսպէս», «ժողովուրդը ճիշտ չի հասկանա», «ժողովրդի գերագույն շահն է այս պահանջում...»:

Ժողովրդի անունից խոսում են նվիրյալները՝ հազվադեպ, վերապահ, կցկտուր: Եվ ոգու առեւտրականներն են խոսում-պատեհ-անպատեհ, վստահ, միանշանակ: Լինել անհնարինը, մեր խորհրդարանի նախագահողը մի օր հանկարծ հայտարարեք. «Ձայնը տրվում է հայ ժողովրդին: Միացրեք... հինգերորդ խոսափողը...»: Բնական է, խորհրդարանը կքարանար գարմանքից, թեև կարծում են, որ մեկնումեկը հարց կուղղեր նախագահողին. «Իսկ ժողովուրդը պատգամավոր է, թե՛ հրավիրված: Եթե հրավիրված է, նրան ձայն տալու հարցը, ըստ կանոնակարգի, պի-

տի քվեարկությամբ որոշել»:

Չգիտեմ, եթե քվեարկության դրվեր, ձայն կտանան, արդյոք, «հրավիրված» ժողովուրդը...

1. Ժողովուրդ... Հազար անհայտով հավասարում: Չավելացնենք եղած անհայտների թիվը: Աշխարհը չի ծանաչել մեզ, միայն ինքներս ենք գիտակցել մեր ժողովրդի վեհությունը, այդ գիտակցումը դարձնելով ինքնապաշտպանության վահան, եւ դա այնքան ենք կրկնել, որ մեզ թվացել է, թե աշխարհն է գիտակցել մեր գինը: Ավա՛ղ... Չխաբենք ինքներս մեզ, նոր փափուկ բարձեր չընենք ժողովուրդ կոչվածի հավաքական գլխի տակ, հակառակը, որոշ փափուկ բարձեր փորձենք հանել: Ինքներս մեզ չընեցնենք քաղցր,


բայց հուսահատ «օրորոցայինով».

«Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում»: ճիշտ է, այդ բառերի ներքին քաղցր թույլը կռահելով, մեծ բանաստեղծը հաջորդ իսկ տողում հաստատում է, թե «մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում», բայց ընդունենք առանց երեսպաշտության, որ, մանավանդ, պարզ ժողովուրդը նախ առաջին տողին է զնգում արծազանքում: Քիչ լինելը տխրելու պատճառ չի, բայց արժանիք էլ չդարձնենք: Քիչ ենք, ուրեմն, շատանք: Ամրապնդվենք մեր հայրենիքից իրապես մեզ մնացած հողակտորին: Նաև ամենուր, որտեղ ապրում ենք, կանք: Եվ, եթե չենք էլ շատանում, ապա մեր ինտելեկտով, գործով, մշակույթով, ազգային միասնականությամբ աշխարհին պարտադրենք մեր ներկայությունը:

քարածուխը պետք է ամենքին եւ մեզ ավելի դաշնակից կրեւեր, իսկ աղամանող շատ-շատ թանկարժեք ակ կարող է ծառայել, այն էլ, մեծ մասամբ, ուրիշի պետության թագուհու մատանուն կամ ապարանջանին:

Եվ հանկարծ լրջորեն չհավատանք, մանավանդ, «մենք համաշխարհային ժողովուրդ ենք» ինքնահանար բանաձեռն՝ ծնված այս անգամ ոչ թե բանաստեղծի, այլ մերօրյա պետական գործի երեսակայության մեջ: Գոնե ասեինք, թե մենք էլ երեւի ոչ քիչ հիմքեր ունենք համաշխարհային ժողովուրդ լինելու, թե մենք էլ պիտի ձգտենք դեպի այդ «համաշխարհայինը», դրա համար զորակոչելով մեր մտքի ու մկանների ուժը, մեր հողի եւ ինտելեկտի թաքցնելով գանձերը: Եվ դրա փոխարեն... Այդ դր հաշվարկով ենք «համաշխարհային», որովհետեւ հայության երկու երրորդն ապրում է հայրենիքից դուրս, ցարցրիկ՝ ողջ աշխարհում (այդ տրամաբանությամբ՝ ինչու «համաշխարհային ժողովուրդ» չեն նաև սիրելի, ռոմանտիկ գնչուները): Կրկնում են՝ նոր, փափուկ բարձեր

Այսօր ամենայն հայոց Գուսան Աշոփի ծննդյան օրն է



Չանգեզուրի այս բարի ծնունդի երգերը հարազատ հայելին են երկնապառու հայարտ Սյունյաց աշխարհի: Իր ստեղծագործությունները մշտապես ներշնչված ու լեցուն եղան այս անարատ հողի գեղեցկությամբ, հայոց բառ ու բանի հոգեհամ վառվառնությամբ, մարդ ու տուն, սեր ու երկիր գովերգելու ճարտարությամբ: Յոգի գերող կշռույթների ու սիրտ գրավող ելեւեջների նրա երգաշարն այս էլ քանի տարի մեր տան սրբություններին ապավինելու, գեղեցիկի մեջ ապրելու վայելք է դառնում: Աշուղ Աշոփին հավասարապես սիրեցին ու իրենցը համարեցին թե

վաստակաշատ բանաստեղծը - սիրով եմ հիշում Յոգու Սահյանի համակ հիացնունքը նրա արվեստով, - թե՛ դասական երաժշտության վարպետ երաժիշտը - սիրով եմ հիշում Թաթուլ Ալթունյանի ուշադրությունը նրա երգերի հանդեպ, - եւ թե՛, մանավանդ, երաժշտասեր լայն հանրությունը: Աշուղ Աշոփի վաստակի թերեւս ամենամեծ գնահատականն է այն, որ այսօր իր երգերից շատերը հաճախ են դասվում ժողովրդական գանձերի շարքին: Եվ երկար են ապրելու նրա երգերը մեզ հետ, մեր մեջ: **ՏԻՊՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ**

Այդ բազմաչարքար գոյական անունը՝ ժողովուրդ

չղենք մեր հավաքական գլխի տակ, այլ հները փորձենք հանել, թույլ չտանք, որ երանության թմբիկին մատնվի մեր մկանները ու մտքի զգաստությունը:

Եվ, ի վերջո: Մեր ազգի հավիտենականության վավերական մանդատ չհամարենք անգամ Վիլյամ Սարոյանի լացի չափ հուզիչ բառերը: Յիշում եք «Յայը եւ հայը» պատմվածքի վերջին տողերը. «Փորձեցեք կործանել այս ցեղը... Կործանեցեք Յայաստանը, տեսեք կկարողանա՞ք: Իրենց տներից քշեցեք անապատ... կրակի տակ տվեք իրենց ու իրենց Աստծո տները: Տեսե՛ք՝ ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը քան տարի հետո հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայր լեզվով»: Փորձել են եւ կործանել են: Եղել է, այդ ամենն էլ ցավոք, եղել է կրակի են տվել մեր եւ մեր Աստծո տները, քշել են մեր հազարամյա բնօրրաններից, եւ այդ եղել է ոչ միայն երեկ, 1896-ին, 1915-ին, 1920-ին, այլեւ այսօր 1988-ին, 1989-ին, 1990-ին, 1991... Եվ մեզ արդեն մնացել է մեր հողի վերջին, ամենավերջին պատառը: Բայց մեկ է՝ ցեղը չի կործանվել... Փառք Աստծո: Բայց կարող էինք, չէ՞, գորեղ գոյություն լինել, հող ու պետություն: Եվ ժողովուրդ, որով աշխարհը կհետաքրքրվեր ոչ միայն եղեռնի, երկրաշարժի կամ բռնագողթի առիթներով, այլ համաշխարհային քաղաքակրթության մեր իրական, մեր ինքնադրոշմ ոտնահեռքերով:

Ես գիտեմ, որ իմ այս ցավատանջ մտորումները եւս ժողովուրդը գուցե «միշտ չհասկանա», կարող է, մանավանդ, կրակի տակ առնվել մեջքերածու կարգախոսների իմ մեկնաբանությունը: Թող ներեն ինձ Պ. Սեալը, Վ. Սարոյանը, Գ. Եմինը, թող ների ինձ վարչապետը. ես մագաչափ իսկ կասկած չունեմ նրանց գրգիռների անկեղծությանը: Պարզապես պիտի մտածենք, թե իրականում ինչ արձագանք կարող է ունենալ մեր խոսքը ժողովրդի հավաքական գիտակցության մեջ: Կընկալվի ան, որ մենք ենք դնում այդ բառերի ենթատեքստում, թե ճշմարտության միայն առաջին, տեսանելի կամ ձեռնտու շերտը: Չգիտեմ: Ամեն դեպքում՝ զգույշ վարվենք բառերի ու կարգախոսների հետ: Յիշենք ռուս բանաստեղծի ազնիվ խոստովանությունը:

2. «Մենք՝ ժողովուրդս...»- կար-

ծեմ այս բառերով է, որ սկսվում է Ազատության մեծ խարտիան՝ ԱՄՆ-ի սահմանադրությունը: Մենք, ժողովուրդս... Լեզվական ինչ անգրագիտություն-կտարակուսի քերականության պրոֆեսորը, որովհետեւ ըստ իմացած կանոնների՝ պիտի լիներ կամ՝ ես, ժողովուրդս, կամ-մենք՝ ժողովուրդներս: Այդ «սխալի» մեջ սակայն վերին ճշմարտության խտացումը կա. ժողովուրդը չի կարող «ես» լինել, այլ միայն «Մենք», որովհետեւ ժողովուրդը բազում «ես»-երի միախառնումն է, գումարը, արդյունքը: Այդ «Մենք»-ն, իհարկե, չի ենթադրում անհատականությունների ձուլարան, մարդկային տեսակների համահարթեցում կամ գազոն, ենթադրում է ընդամենը, որ մարդկանց, նրանց հայացքների ու մտածողության տարբերությունները ստորադասվում են ժողովրդի գերագույն շահի տրամաբանությանը: Այդ «Մենք»-ը, եթե կուզեք, կառուցվածք է, որի մեջ կամովին մտնում-միավորվում են մարդիկ, դրանով իսկ տարածությունը Յայրենիք՝ եւ բնակչությանը ժողովուրդ դարձնելով: Եվ այդ գիտակցությունն է, որ գենետիկորեն անցնելով սերնդից սերունդ, անխաթար է պահում հիմնականը - ժողովուրդ եւ պետություն: Վկան, թեկուզ, ԱՄՆ-ի երկուհարյուրամյա պատմությունը, անհատի ազատության, մարդկային հայացքների տարբերությունների համարյա սանձարձակ հրավառություն եւ պետական-ժողովրդական հզոր, անխորտակ, համարյա չփոփոխող կառույց, սահմանադրություն, որի մեջ երկու հարյուր տարում համարյա ոչ մի սկզբունք չի վերանայվել:

Կգամ, արդյոք, օրը, երբ հայությունը նույնպես կկարողանա իրեն ենթարկել համանման բանաձեռի, աշխարհին ազդարարելով՝ «Մենք, հայ ժողովուրդս...»: Չգիտեմ: Առայժմ մենք ավելի «ես»-երի շարան ենք, ընդ որում, համարյա ամեն «ես» վստահ է, թե հենց իր մի կա-



թիլի մեջ է ճշգրիտ արտացոլվում ժողովրդի «Մենքը»:

Թեպետ... Թեպետ մեր պատմության մեջ եւս կան, եղել են այդ «Մենք»-ի հզոր պայթյուններ: Ավարայր... Սարդարապատ... Կարողացանք հաղթել, որովհետեւ կարողացանք համախմբվել գերագույն մի գաղափարի շուրջ եւ (թեկուզե՛ք առժամանակ) մի կողմ դրվեցին տարբերություններ ու տարածայնություններ, փոխադարձ անվստահություն եւ կենտրոնախույս եսամոլություն: ***

Եվ ինչ... Ես հիմա ինչպե՛ս որոշեմ ժողովրդի «ոսկե միջինը», ում կարծիքը համարեմ ժողովրդի կարծիք: Օ՛, եթե հնարավոր լիներ անհնարինը՝ իրար գումարել բոլորին-ազնիվ ու անազնիվ, չար ու բարի, խելոք ու պարզունակ, հետո կարողանայինք բաժանել այդ «գումարը» առեղծվածային մի թվի վրա եւ քանորոշում ստանայինք այդ «ոսկե միջինը»: Չկա, չի կարող լինել նման «միջին», որովհետեւ երեկ էլ, այսօր էլ «Մենք» ենք, թեպետ այսօր, երբ ավելի դժվար ու բախտորոշ օրեր են, թվում է, ավելի պիտի սիրենք ու խնայենք իրար: Չբաժանենք, չհակադրենք իրար մեր ժողովրդի տարբեր գույները:

Մենդեևան 95-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Արամ Յարությունյան. Կրուք սիրո եւ երախտիքի

Կենսագրություն, որ նաեւ Գորիսի պատմությունն է

Ես Առաքելիչի հետ ծանոթացել եմ հենց Տաթևիկի շինարարությունում: Այն ժամանակ 25 տարեկան էի: Յայաստանի համար կարեւոր հարվածային այդ կառույց եկան Յայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար Յակով Ջարոբյանը, ՅԿԿ Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար Քրիստափոր Պետրոսյանը, Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ Արամ Առաքելիչը եւ պաշտոնատար այլ անձինք: Ես սաղավարտով էի, հագել էի ռետինե երկարաձիտ կոշիկներ: Երեւի թե տպավորություն թողեցի նրանց վրա: Նրանք հարցրին՝ ամուսնացած ես: Այո, պատասխանեցի: Երեխա ունե՞ս: Շուտով կլինի, - եղավ իմ պատասխանը: Երեանում տուն ունե՞ս: Ոչ, սասցի ես: Նրանք Երեանում ինձ բնակարան տվեցին հետագայում:

Առաքելիչի մեծությունն այն էր, որ նա այլ վայրում ապրող անվանի գործիչներին միշտ հրավիրում էր Գորիս, որ նրանց կապը ծննդավայրի հետ չկտրվի: Բացի այդ, Գորիս էր հրավիրում նաեւ նշանավոր, խորհրդային Միությունում հայտնի մարդկանց: Յիշում եմ, Խնձորեսկի մշակույթի տան բացմանը հրավիրել էր կոմպոզիտոր Ֆրանկելին, ով բազում ֆիլմերի երաժշտություն էր գրել: Նա Գորիսում նշեց «Յայպետ-նախագիծ» ինստիտուտի տնօրեն Լիկոլայ Յակոբյանի ծննդյան 70-ամյակը: Նրա հրավերով Գորիս էին գալիս հայտնի ճարտարապետներ, նախագծողներ: Այսինքն՝ առիթը բաց չէր թողնում Գորիսը բոլորի համար տեսանելի դարձնելու համար: Գորիսն ասես աշխարհի

կենտրոնն էր: Եվ Առաքելիչը հպարտանում էր Գորիսի ամեն կառույցով, գորիսեցու արարող-ստեղծող ձեռքերով: Յետաքրքիր սովորություն ուներ Արամ Յարությունյանը: Բացօթյա խորոված էինք անում: Նա վերցնում էր լավաշը, փռում կրակի վրա եւ չորացած հացն ու պանիրն այնպես էր ուտում, որ բոլորի ախորժակը բացվեց: Երբ գնում էինք Երեան, գործն ավարտելուց հետո սիրում էր գնալ գյուղինստիտուտ, որի ղեկավարը գորիսեցի Միքայել Գյուլխասյանն էր: Գյուլխասյանի աշխատասենյակը նրա խաղաղության կղզին էր: Սիրում էր ժամերով նստել-խոսել Գյուլխասյանի հետ: Ու վերջում չէր մոռանում ասել՝ ինչքան Գորիսից ու տարածաշրջանից ուսանողներ կան, նրանք դիպլոմները չտաս, մինչեւ նրանք տուն չվերադառնան ու աշխատանքի չանցնեն տեղերում:

Արամ Յարությունյանի մեջ մարդ արարածի եւ պաշտոնյա արարածի մեկտեղումից սինթեզվել էր մի հետաքրքիր կերպար, որը միշտ գործել է հանուն հայրենիքի բարգավաճման: Ու պետք չէ զարմանալ, որ նրա օրոք ձորերում ծվարած ու ընդարձակվելու հնարավորություն չունեցող գյուղերն իրենց պատմությունը շարունակեցին հարթավայրերում, ուր վեր խոյացան ժամանակակից տներ, դպրոցների, մանկապարտեզների շենքեր: Գորիսում եւ տարածաշրջանի գյուղերում շինարարությունը մեծ թափ էր առել: Գորիսի բնակչությունը 20 հազարից հասավ 30 հազարի:

«Սյունյաց երկիր» թերթի տարեկան հաշվետվությունը

Յամաձայն «Չանգվածային լրատվության մասին» ՅԿ օրենքի՝ ներկայացնում ենք «Սյունյաց երկիր» թերթի 2019 թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

Յամախառն եկամուտ՝ 13 470 495
 Այդ թվում՝
 Նվիրատվություն՝ 0
 Սուբսիդիա՝ 0
 Գովազդ (առանց ԱԱԳ-ի)՝ 183 000

Սյունյաց երկիր

ՅԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՅՐԱՏԱՐԱՎԿԻԶ
«ՅՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
 ՍԱԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սկսվածի խմբագիր՝
ՍՍԱՎԵՐ ԻՄԵՆԱՅԱՆ

Յացե՛ք՝ Կապան, Շահումյան 20/32:
 Յեռ.՝ (0285) 5 25 63,
 (091) 45 90 47,
 (077) 45 90 47:
 էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԳ» - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Յուրումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Ռ՝ Գնանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Յացե՛ք՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Շավաղը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.04.2020թ.: